Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՕՖԵԼՅԱ ԶԱՔԱՐՅԱՆԻ Ք. ԲՐՅՈՒՍԵԼ (ԲԵԼԳԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը. Օֆելյա Զաքարյան

2. Զբաղեցրած պաշտոնը. ՀՀ գիտության կոմիտեի գիտության քաղաքականության վարչության գիտության քաղաքականության և զարգացման ծրագրերի բաժնի ավագ մասնագետ

3. Գործուղման վայրը և ժամկետները. Բելգիայի Թագավորություն, ք. Բրյուսել, 23-26 մայիսի, 2023 թվական

4. Հրավիրող կողմը. Եվրոպական հանձնաժողովի կրթության, երիտասարդության, սպորտի և մշակույթի տնօրենություն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը). Մասնակցություն ԵՄ «Հորիզոն Եվրոպա» ծրագրի շրջանակներում իրականացվող «Մարի Սկլոդովսկա-Կյուրի գործողություններ» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) ազգային կոնտակտային անձանց ամենամյա հանդիպմանը և ծրագրի ներքո անցկացվելիք վերապատրաստման դասընթացին:

6. Քննարկված թեմաները.

- Ծրագրի շրջանակներում տրամադրվող դրամաշնորհների ընթացքում իրականացվող աուդիտի կարևորությունը և ընթացակարգերը, հետազոտողներին տրամադրվող ֆինանսական միջոցների աուդիտ, փաստաթղթաշրջանառության (այդ թվում՝ աշխատանքային պայմանագրերի, ինքնակենսագրականների, բանկային տեղեկանքների) ստուգման ընթացակարգը,
- Ծրագրի շրջանակներում տրամադրվող դրամաշնորհների ընթացքում վերահսկողական հատուկ միջոցների կիրառումը, այդ թվում՝ ֆինանսական վերահսկողություն, շահերի բախման բացառում, խմբի անդամների հավաքագրման և աշխատանքային պայմանների սահմանման նկատմամբ վերահսկողություն,
- ոչ ակադեմիական սեկտորի ներգրավումը Ծրագրում, ոլորտային վերլուծություն,

- Եվրոպական հետազոտական գործադիր գործակալության (European Research Executive Agency) գործունեության հիմնական ուղղությունները և Ծրագրի Ազգային կոնտակտային անձանց աջակցմանն ուղղված վերապատրաստումների անցկացումը,
- Open Research Europe-ի էությունը և հիմնական սկզբունքները, բաց գիտության կարևորությունը և նախորդ տարիների նկատմամբ համեմատական վերլուծություն,
- Ծրագրի 2023-2024 աշխատանքային ծրագրի վերանայում,
- Ծրագրի 2022 թվականի մրցութային ծրագրերի վիճակագրություն, այդ թվում՝ դոկտորական կրթաթոշակների, հետդոկտորական կրթաթոշակների, անձնակազմի փոխանակում (Staff Exchanges), համաֆինանսավորում (COFUND), MSCA4Ukraine ծրագրերի վերլուծություն,
- Ծրագրի ազգային կոնտակտային անձանց աջակցմանն ուղղված միջոցառումների ներկայացում,
- հետազոտությունների գնահատման չափանիշները և վերջիններիս բարեփոխմանը միտված գործողությունները,
- Ծրագրի ազգային կոնտակտային անձանց միջև հաղորդակցության կարևորությունը, այս ոլորտում ներդրված նորույթները և ձեռնարկված միջոցառումները,
- Եվրոպական ինովացիոն խորհուրդ (European Innovation Council), գործունեության հիմնական ուղղությունները, նպատակները:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Այցի ընթացքում մասնակցել եմ Եվրոպական հետազոտական գործադիր գործակալության (European Research Executive Agency) կողմից անցկացվող՝ Ծրագրի ազգային կոնտակտային անձանց վերապատրաստման դասընթացին, որի շրջանակներում քննարկվել են ոչ ակադեմիական սեկտորի Ծրագրում ներգրավման կարևորությունը, տարբեր երկրների ազգային կոնտակտային անձինք ներկայացրել են իրենց երկրում այս ուղղությամբ իրականացված միջոցառումները և հաջողությունները: Ծանոթացել եմ Ծրագրի շրջանակներում տրամադրվող դրամաշնորհների ընթացքում իրականացվող աուդիտի ընթացակարգերին, հետազոտողներին տրամադրվող ֆինանսական միջոցների աուդիտին, փաստաթղթաշրջանառության (այդ թվում՝ աշխատանքային պայմանագրերի, ինքնակենսագրականների, բանկային տեղեկանքների) ստուգման ընթացակարգին, Ծրագրի շրջանակներում տրամադրվող դրամաշնորհների ընթացքում վերահսկողական

հատուկ միջոցների կիրառմանը, այդ թվում՝ ֆինանսական վերահսկողությանը, շահերի բախման բացառմանը, խմբի անդամների հավաքագրման և աշխատանքային պայմանների սահմանման նկատմամբ վերահսկողությանը:

Այցելել եմ Եվրոպական հանձնաժողով, որտեղ մասնակցել եմ Ազգային կոնտակտային անձանց ամենամյա հանդիպմանը, որի ընթացքում ծանոթացել եմ Open Research Europe-ի էությանը և հիմնական սկզբունքներին, բաց գիտության կարևորությանը, վերանայել ենք Ծրագրի 2023-2024 աշխատանքային ծրագիրը, ուսումնասիրել ենք Ծրագրի շրջանակներում 2022 թվականի ընթացքում անցկացված մրցութային ծրագրերի վիճակագրությունը, այդ թվում՝ Դոկտորական կրթաթոշակների, Հետդոկտորական կրթաթոշակների, Անձնակազմի փոխանակում (Staff Exchanges), Համաֆինանսավորում (COFUND), MSCA4Ukraine ծրագրերի վերլուծությանը, ներկայացվել են Ծրագրի ազգային կոնտակտային անձանց աջակցմանն ուղղված միջոցառումները, հետազոտությունների գնահատման չափանիշները և վերջիններիս բարեփոխմանը միտված գործողությունները, Ծրագրի ազգային կոնտակտային անձանց միջև հաղորդակցությանն ուղղված նորույթները և ձեռնարկված միջոցառումները, ծանոթացել եմ Եվրոպական ինովացիոն խորհրդին (European Innovation Council), գործունեության հիմնական ուղղություններին, նպատակներին:

8. Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Պայմանավորվածություն է ձեռք բերվել ընդլայնել ՀՀ-ում Ծրագրի նկատմամբ իրազեկվածությունը և հետաքրքրվածությունը, այս ուղղությամբ ձեռնարկել համապատասխան միջոցառումներ, մասնավորապես՝ կազմակերպել տեղեկատվական օրեր տարբեր հարթակներով, այդ թվում՝ ՀՀ գիտության կոմիտեի պաշտոնական կայքէջում և այլ սոցիալական հարթակներում պարբերաբար տեղադրել Ծրագրի, ինչպես նաև Ծրագրի շրջանակներում տրամադրվող դրամաշնորհների վերաբերյալ տեղեկատվություն: Ձեռք բերված գիտելիքի և փորձի հիման վրա «Մարի Սկլոդովսկա-Կյուրի գործողություններ» ծրագրի շահառուներին տրամադրել խորհրդատվական աջակցություն դրամաշնորհային ծրագրերին դիմելու գործընթացի, հայտադիմումների կառուցվածքի և տեխնիկական բովանդակության, դրամաշնորհների բյուջեի նախանշման, հայտադիմումների ադմինիստրատիվ փաստաթղթերի լրացման ու ներկայացման գործընթացի վերաբերյալ:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Քննարկվել են Հայաստանում «Մարի Սկլոդովսկա-Կյուրի գործողություններ» ծրագրի շրջանակներում տրամադրվող դրամաշնորհների վերաբերյալ իրազեկվածության և մասնակցության խթանմանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև դրանց իրականացման գործում Ազգային կոնտակտային անձանց ակտիվ ներգրավվածության հարցը:

31 մայիսի, 2023 թվական

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԲԱԺՆԻ ԱՎԱԳ ՄԱՍՆԱԳԵՏ՝ ՕՖԵԼՅԱ ԶԱՔԱՐՅԱՆ